

Ճառականութիւն կ'ընէր : Արտինքա-
ջոթեանը համեմատէր նաև իր հասա-
կին մեծութիւնը, կերպարանքին աշա-
ւորութիւնը, մարմնոյն ոյժը և բարուց
ազնուութիւնը . ասոնցմով դիւրաւ շահե-
ցաւ իր հայրենակցաց սիրտը, և անոնց
վատահութիւնը պարապ չհանեց :

Արտվշետե աղէկ տեղեակ էր իր եր-
կրին այլ և այլ դիրքերուն, անով ալ
քիչ մարդով շատ անգամ յաղթեց Պա-
ւերացւոց ու հալածեց զանոնիք Ծափու-
լէն . քանի մը անգամ ալ Պաղպիացւոց
հետ զարնուեցաւ ու ցրուեց զիրենք :

Ա ենայի հաշտութեամք Պաղպիա-
ցիք ու Կատրիացիք որոշեցին որ Ծափ-
ութ նորէն Պաւերայի տէրութեան
մնայ . ան ատեն Հոփէրն ալ զէնքը
վար դրաւ . և ինչպէս որ ինքը միշտ իր
խօսքին վրայ կեցող և յաղթուածնե-
րուն վրայ զութ ցուցընող էր՝ կարծեց
թէ ուրիշներն ալ իրեն հետ այնպէս
պիտի վարուին . բայց խարուեցաւ :

Ա ամն զի թէպէտե և՝ Կափոլէն յայտ-
նապէս խոստացեր էր որ Ծափութւոց
ամենեին վնաս մը չըլլայ , նեղութիւն
չարուի , բայց քիչ ատենէն նայեցաւ
որ անոնց ապստամբութեան վրէժը ի-
րենց գլխաւորէն առնէ : Կ'ըսէն թէ
աս մտքավ Պաղպիոյ տէրութիւնը զըր-
պարտեց Հոփէրը որ իբր թէ Կատրիա-
ցւոց հետ ծածուկ թզթակցութիւն ու
մատնութիւն կ'ընէ : Խեղձ Հոփէր
տեսնելով որ իր կեանքը վտանգի մէջ
է, ձգեց լեռները փախաւ . Կափոլէն
շատ մը ստակ խոստացաւ Հոփէրը բըռ-
նողին, անով ձեռք ընկաւ Հոփէր բարձր
լեռան մը վրայ՝ ձիւներու մէջ 1810^{ին},
ու Վանթուա տարուելով՝ հոն սպան-
նուեցաւ : Ծափութիք մեծ համարում
ունին աս իրենց դիւցազին վրայ, Կա-
տրիոյ կայսրն ալ Հոփէրի ցեղին շատ
բարիք ըրած է . 1823^{ին} անոր ոսկորնե-
րը Վանթուայէն փոխադրեցին Խնճս-
պրուք, որ Ծափովի մայրաքաղաքն է, ու
մայր եկեղեցւոյն մէջ թաղեցին, քովն
ալ ետքը աս պատկերին մէջ երեցած
բարձանը կանգնեցին որ եօթը ստնաչափ
բարձրութիւն ունի :

ԲԱՆԱՍՏԵՂԱՊԻԹԻՒՆ

ԱԶԳԱՅԻՆ ՌԱՄԿԱԿԱՆ ԵՐԳ

ՀԵՏԱԳԱՅ ռամկական երգը Ա բաս-
տանէն խրկեց մեզի ազնիւ և ուսում-
նակի պարոն Պալուստը Ծ իրմազա-
նեան Ա արդանեանց : Կ'երևնայ թէ
Ծափաթարներուն արշաւանաց ժամանա-
կը եղած է այն մեր մեծ Խշանին դըս-
տեր սուգը . ու թէ անձին և թէ դի-
պուածին նշանաւոր ըլլալուն համար՝
ինչուան այսպիսի սգալի երգ շինուեր
է վրան ան ատենէն : Լ եզուին ոձը թէ
պէտ Պարսկահայոց և Ա բաստանցի
Հայոց լեզուներուն նման , բայց շատ
յատակ ու գրաբառի մօտ է . շէնքը չա-
փաւորապէս վարպետ ու կոկ , իմաստն
ալ ազգասիրական ու վառվըռուն :

Ա ս գ ո ւ թ է ե ծ ի ի ւ ի ւ :

Ա Հ Ա Խ Ի Ւ Ն Ե Ն

Ի ն չ ե ս ն ս տ ե լ մ ո ւ ն ջ ք ո բ ա ն ի ն .
Վ ե ր կ ա ց դ ու ր ո ե կ թ է ի ն չ խ օ ս ի ն .
Խ ե ղ ձ ի կ է ս է ր ք ո ա ր ժ ա ն ի ն ,
Ո ր գ ու ը լ լ ի ս կ ի ն թ ա թ ա ր ի ն .
Դ ո ւ պ է ս ք է ր ը լ լ ի ւ տ ի կ ի ն ,
Տ է կ ն ա ց տ ի կ ի ն մ ե ծ ի շ խ ա ն ի ն ,
Ե ւ ո չ է ս պ է ս ա ն օ ր ի ն ի ն ,
Զ ե ւ ը կ ա պ ա ծ ը լ ն ի ս գ ե ր ի ն :

Դ Ո Ւ Ս Տ Ր Ե

Ի ն չ ե ս ա ս ու մ Ճ ա ր ը գ կ ա ր ա ծ ,
Չ ե մ Հ ա ս կ ա ն ու մ շ , ա ս ա գ ո ւ բ ա ց :

Ա Հ Ա Խ Ի Ւ Ն Ե Ն

Ի ս օ ր ա ս տ ղ ը գ թ ը ռ տ ա ւ կ ո ր ա ւ
Լ ո ւ ս ա ր ե լ ք խ ա ւ ա ր ո ւ ե ց ա ւ ,
Վ ա յ ի մ գ լ ս ի ս , վ ա յ ք ե զ Ծ ո ւ շ ա ն ,
Գ ե ր ի գ ն ա ց ի ք թ ա թ ա ր ը ս տ ա ն .
Լ ո յ ս հ ա ւ ա ր ը գ է ս պ է մ ո ւ ն ա ս
Մ ա հ ա մ ե տ ի ն կ ր օ ն ք ի գ ա ռ ն ա ս :

Դ Ո Ւ Ս Տ Ր Ե

Լ ե զ ու գ ս ե ն ա յ , բ ե ր ա ն դ չ ո ր ն ա յ ,
Ի ն չ հ ա մ բ ա ւ է , ա ս ա ի ն չ կ ա յ :

Ա Հ Ա Խ Ի Ւ Ն Ե Ն

Ս է ծ ի շ խ ա ն ը ն ք ե զ ա ս ու ե լ է
թ ա թ ա ր խ ա ն ի ն հ ե տ ը ա ս ն է :

ԴԱՒՍՏԻՆ

Ազճիքոցերք . եկէք եկէք .
Կորած գլխիս դառը լացէք .
Մև էր գառել օր ծընընդեան ,
Որ ես ծընայ թշուառական :
Մէրիկ վեր կաց գերեզմանէդ ,
Համբաւ լըսէ աղջըկանէդ .
Իմ ուե բախտը էնապէս արեց ,
Թաթարըստան մինակ քըշեց .
Լնդութ օրհաս հոգին հանէ ,
Գետին պատռէ , ինձ ներս տանէ :

ԱՂԱԽԻՆ

Ազճիկ պարոն , էս ինչ լաց է .
Ազի արտասունք գառըն կոծ է .
Մէնք ամէնքըս ցաւըդ տանենք ,
Մէր գլուխը քեզ մատաղ կ'անենք ,
Ուր որ երթաս հետըդ կը գանք .
Զեր աղ ու հացն կը մոռանանք :
Մէք վո՞ց պէտք է տեսնենք աքրով
Տեղէս մինակ գրնաս լալով .
Աչքերդ սրբէ և հանդարառուիր ,
Հերիք եկաւ քեզ մի ծեծուիր :

ՊԱՌԱԽԻՆ

Վաթսուն տարի իմ ձեր դըռան ,
Հէրըդ պապերդ են իմ կըռան .
Ծընած սընած իշխան եղած ,
Էսպէս մին ցաւ ես չեմ տեսսած :
Ականջըդ բաց , լըսէ խրասիս ,
Մըտիդ ձըգես էս պառաւիս .
Ուր որ գընաս՝ ինչ տեղ ըլնիս ,
Հաստատ մընաս լուս հաւատիս .
Չըմոռանաս հայոց ազգիս ,
Միշտ հանապաղ նըրան օդնիս .
Ամենայն ժամ միտքդ ձըդիս ,
Հայրենէ ացըդ պիտոյ ըլնիս :
Է՛հ տէր ընդ քեզ , գընաս բարեւ ,
Քրիստոս պահէ քո ըսյս արեւ :

—————
Մէկ բան ասա մըռողին ,
Բիւր բան մ'ըսեր չառողին :

‘Ասի գուն ՚ի գործ ձեռնարկէ ,
Ետքն ՚ի յերկինք ակնարկէ :

—————
Ճոռվին չքկայ դիւրին բան ,
Չուստին չքկայ դժուար բան :

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՏՈՒԱԾ Ժ .

|| Եծ ու իսդը իալուած :

‘ԼԱԽԸՆ ԹԱՅ Հատուածին մէջ իմացանք թէ ինչ ըսել է մեծ ու պղտի կալուած . հիմա տեսնենք թէ երկրի մը երջանկութեանը համար որը աւելի օգտակար է . մեծ կալուածներ բաժնելը նոյն երկիրը , թէ պղտի կալուածներ :

Լյրկու տեսակ բաժանումն ալ իրեն օգուտներն ունի . և գլխաւոր օգուտնին աս է որ երկիրը պարապ երեսի վրայ չմնար : Պղտի կալուած բաժնելը աւելի բնական է , ու երկիրի մը երջանկութեանը աւելի յարմար կուգայ , և մեծ կալուած բաժնելով ինչ զեղծմունք որ կրնայ առաջ գալ՝ ան զեղծմունքները չեն ըլլար . վասն զի մեծ կալուած բաժնուելուն պէս՝ անօնց տէրերը կրնան մէջերնին խօսքը մէկ ընել , ու ամենայն բերոց զիները բարձրացընել , մշակներուն թոշակը քիցընել , ու զանոնք իբրև ստրուկ գործածելով՝ ան խեղջերուն քրտինքովը շաղուած հացով յօրանալ պալատներու մէջ : Պղտի կալուած բաժնելուն գլխաւոր օգուտները ասոնք են . նախ մշակական ճարտարութեան ետևէ եղողներուն թիւր կը շատնայ , ինչպէս որ փորձով տեսնուած է . երկրորդ՝ արմտեաց գինը կը նուազի , վասն զի հետամտութիւնը խիստ շատ ըլլալուն համար՝ ամէն մարդ իր բերքը քշելու կը նայի . երրորդ՝ ամէն մշակ գոհ սրտով կը մշակէ իր փոքր կալուածը , ու աւելի հանգիստ կեանք կ'անցընէ , որ թէ մարմնոյ առողջութեան և թէ բարոյականի շատ կ'օգնէ : Իսոր դէմ թէ որ ըսելու բան մը կայ՝ աս է որ մշակութեան արուեստը ան աստիճանի չժաղկիր . որովհետեւ սռ վորաբար մեծ փորձերը մեծ կալուած .